ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **պետական արարողակարգ՝** Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերությունների շրջանակներում կիրառվող համընդհանուր կանոնների, ազգային ավանդույթների և պայմանականությունների ամբողջություն.

2) **արարողակարգային ավագություն՝** Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար անձանց ավագությունը, որով որոշվում է ներպետական և միջազգային բնույթի միջոցառումների ժամանակ պետական յուրաքանչյուր մարմնի և դրա ներկայացուցչի ներկայության աստիճանակարգությունը.

3) **բարձրաստիճան պատվիրակություններ՝** Հայաստանի Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, փոխվարչապետերի և արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնի ղեկավարի հրավերով Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրյա պետությունների, կառավարությունների, խորհրդարանների, և արտաքին հարաբերությունների գերատեսչությունների ղեկավարների, փոխվարչապետերի, միջազգային կազմակերպությունների և այլ միջազգային կառույցների ղեկավարների և նրանց լիազորած պաշտոնատար անձանց գլխավորած ~~և այլ~~ պատվիրակություններ.

4) **դիվանագիտական անձնակազմ՝** Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների անձնակազմ, որոնց վրա տարածվում են Վիեննայի դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների մասին կոնվենցիաներով նախատեսված արտոնություններն ու անձեռնմխելիությունը.

5) **փոխադարձության սկզբունք՝** միջազգային իրավունքի սկզբունք, որի համաձայն՝ պետությունները արարողակարգային միջոցառումների և արարողակարգային ընթացակարգերի առումով միմյանց նկատմամբ ցուցաբերում են նույնաբովանդակ վերաբերմունք, ապահովում են համանման պայմաններ և հնարավորություններ:

Հոդված 8. Բարձրաստիճան պատվիրակությունների այցելությունների և դրանց հետ կապված միջոցառումների ֆինանսավորման կարգը

1. Բարձրաստիճան պատվիրակությունների՝ Հայաստանի Հանրապետություն այցերի հետ կապված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության համար նախատեսված միջոցներից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծախսերը ներառում են բարձրաստիճան պատվիրակությունների՝ օդանավակայանում դիմավորելու, սպասարկելու, ճանապարհելու, կեցության, տրանսպորտային և կազմակերպատեխնիկական ապահովման ծախսերը:

3. Բարձրաստիճան պատվիրակությունների՝ Հայաստանի Հանրապետություն այցերի և դրանց հետ կապված միջոցառումների ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է հետևյալ ձևաչափով.

օտարերկրյա պետության կամ կառավարության ղեկավարի պետական այց՝	ղեկավար (ամուսին) և մինչև 10 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության, կառավարության և խորհրդարանի ղեկավարի պաշտոնական այց	ղեկավար (ամուսին) և մինչև 8 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության, կառավարության և խորհրդարանի ղեկավարի աշխատանքային այց	ղեկավար (ամուսին) և մինչև 6 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության արտաքին հարաբերությունների գերատեսչության ղեկավարի պաշտոնական այց	ղեկավար և մինչև 4 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության փոխվարչապետի այց	ղեկավար և մինչև 2 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության արտաքին հարաբերությունների գերատեսչության ղեկավարի աշխատանքային այց	ղեկավար և մինչև 2 ուղեկցող անձ
միջազգային կազմակերպության և այլ միջազգային կառույցների ղեկավարի այց	ղեկավար և մինչև 4 ուղեկցող անձ

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ֆինանսավորման ձևաչափը կարող է փոփոխվել՝ ելնելով փոխադարձության սկզբունքից՝ պետական արարողակարգի ծառայության առաջարկությամբ՝ վարչապետի որոշմամբ:

5. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական արարողակարգի ծառայության ներկայացրած ~~նախահաշվի~~ հաշվետվության հիման վրա՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի՝ վարչապետի որոշմամբ:

6. Օտարերկրյա պետությունների բարձրաստիճան պատվիրակությունների՝ Հայաստանի Հանրապետություն այցերի հետ կապված ներկայացուցչական ծախսերը ֆինանսավորվում են Հանրապետության նախագահի, ~~Կառավարության~~ Վարչապետի, Ազգային ժողովի աշխատակազմերի համար նախատեսված միջոցներից:

7. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված միջազգային կազմակերպությունների և այլ միջազգային կառույցների ցանկը, սահմանվում է վարչապետի որոշմամբ: